Նախագիծ
Արձանագրային

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով:

Երևանի քաղաքապետ ***Գագիկ Բեգլարյան***

ՆԱԽԱԳԻԾ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-269 օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասում «համայնքի ղեկավարին» բառերից հետո լրացնել «, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի վարչական շրջանի ղեկավարին» բառերը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Դատավարության կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների դրսևորումներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածը, որի համաձայն դատարանը գործին մասնակցող անձանց և դատավարության մյուս մասնակիցներին տեղեկացնում է /ծանուցում է/ դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանվում է, որ եթե պատասխանողը չի ստացել սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերով սահմանված կարգով ուղարկելու միջոցով, ապա հայցվորի միջնորդությամբ հայցադիմումն ուղարկում է պատասխանողի վերջին հայտնի բնակության կամ գրանցման վայրի համայնքի ղեկավարին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի համապատասխան Երևան քաղաքը բաժանված է վարչական շրջանների և տեղական ինքնակառավարումն իրականացվում է վարչական շրջանների միջոցով:

Հաշվի առնելով Երևան քաղաքի առանձնահատկությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթով սահմանված դատավարական գործողությունը առավել

արդյունավետ իրականացնելու համար նպատակահարմար է Երևան քաղաքում քաղաքացիական և վարչական գործերով պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում դատարանի կողմից հայցադիմումը ուղարկել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին։

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ